Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2023թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Արամ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Շոպրոնի 2-րդ նրբանցք հ.7/3 հասցեում, տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 75.43քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.24082013-01-0202 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուրջյան փողոցին հարող տարածքում՝ տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 75.43քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Արամ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Շոպրոնի 2-րդ նրբանցքի հ.7/3 հասցեում գտնվող 75.43քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.24082013-01-0202 վկայական/ փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուրջյան փողոցին հարող տարածքում գտնվող 75.43քմ մակերեսով հողամասի հետ:

Քննարկվող հողամասը հանդիսանում է դեպի «հ.114 մանկապարտեղ» ՀՈԱԿ տանող մուտքի հատված, որը Նոր Նորք վարչական շրջանի կողմից բարեկարգվել և կանաչապատվել է և ծառայում է որպես ճեմուղի, ինչի հետևանքով Շոպրոնի 2-րդ նրբանցքի հ.7/3 հասցեում Արամ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային օգտագործումը դարձել է անհնար: Ստեղծված իրավիճակում առավել նպատակահարմար է գտնվել սեփականատիրոջը տրամադրել այլ հատվածում նույն մակերեսով հողամաս, որը հնարավորություն կտա վերջինիս տնօրինել սեփական գույքը և բարձրացնել հողամասի արդյունավետությունը:

Մասնագիտական որակավորում ունեցող «ԱԲԻՏ» ՍՊ ընկերության եզրակացության համաձայն՝ Շոպրոնի 2-րդ նրբանցքի հ.7/3 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Արամ Վարդանյանին պատկանող հողամասի շուկայական արժեքը կազմում է 8.400.000 ՀՀ դրամ, իսկ փոխանակման համար առաջարկվող համայնքային սեփականություն համարվող Գյուրջան փողոցի հ.37 հասցեի հարևանությամբ գտնվող հողամասի շուկայական արժեքը՝ 12.200.000 ՀՀ դրամ: Սեփականատիրոջ կողմից վճարվել է տարբերություն կազմող 3.800.000 ՀՀ դրամը:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**